

## Ինչու է Linux-ը ավելի լավ

### Մտացեք վիրուսների մասին:

Եթե ձեր համակարգիչը անջատվում է առանց հարցնելու, եթե էկրանին հայտնվում են պատուհաններ անհասկանալի հաղորդագրություններով և/կամ գովազդով, որոնց մասին դուք ոչմեկի չեք խնդրել, եթե առանց ձեր իմացության ուղարկվում են նամակներ բոլոր ձեր կոնտակտներին, ապա կան բոլոր հիմքերը մտածել, որ ձեր համակարգիչը վարակված է վիրուսով: Հիմնական պարճառը այդ ամենի՝ ձեր համակարգիչը աշխատում է Windows ՕՏ-ում:

Վիրուսներ Linux-ի համար պրակտիկորեն գոյություն չունեն: Ես ի նկատի չունեմ, որ վիրուսներ ընդանրապես գոյություն չունեն: Ընդակառակը, ես ուզում եմ ասել, որ եթե դուք երբևիցե լսել եք Linux-ի համար վիրուսի մասին, ապա ինձ հետաքրքրի կլինեք այդ մասին տեղյակ լինել, քանի որ այդ վիրուսները այնքան քիչ են հանդիպում պրակտիկայում, որ կարելի է ասել որ նույնիսկ այդպիսիներ գոյություն չունեն: Այդ ամենի հիմնական պատճառներն են.

\* Մարդկանց մեծամասնությունը օգտագործում է Microsoft Windows, իսկ "pirate"-ների հիմնական նպատակն է հասցնել հնարավորին չափ մեծ վնաս ( կամ վերահսկել համակարգիչը ), այդ իսկ պատճառով իրենց նպատակը դառնում է Windows-ը:

\* Linux-ում օգտագործվում է առաջադիմական իրավունքների բաժանման մոդել: Windows-ում դուք ( և ցանկացած ծրագրի համակարգչում տեղակայված ) իրավասու է անել "ամեն ինչ" այդ համակարգումի հետ ( կամ ստրպված եք ծքխսել թանկարժեք ժամանակ անվտանգությունը բարելավվելու նպատակով ): Դուք կարող եք ջնջել ցանկացած ինֆորմացիա նույնիսկ Windows-ի համար հույժ կարևոր տվյալներ՝ Windows-ը թույլ է տալիս այդ ամենը ( կերկնվեմ, սակայն ասեմ, որ դուք կարող եք այս դեպքի համար նույնպես ծախսել թանկարժեք ժամանակ և լուծել այդ խնդիրը ): Պրոբլեմները կսկսվեն հաջորդ վերաբեռնումից հետո: Հիմա պատկերացրեք որ ցանկացած ծրագիր կարող է ջնջել և/կամ փոփոխել այդ տվյալները նույն կերպ: Linux-ում դա չի թույլատրվում: Ամեն անգամ, երբ դուք կատարում եք ինչ որ գործողություն, որը կարող է ինչ որ կերպ ազդել համակարգի վրա, դուք պարտավոր եք մուտքագրել root-ի ծածկագիրը ( և եթե դուք այն չգիտեք գրծողությունը չի կատարվի ): Վիրուսները չեն կարող լինել ամեն տեղ կամ փոփոխել համակարգը՝ իրենք այդ "իրավունքը" չունեն:

\* Շատ աչքեր՝ քիչ սպալներ անվտանգության մեջ: Linux-ը դա ծրագրային ապահովում է բաց ծրագրային կողով, ինչը նշանակում է, որ ցանկացած ծրագրավորող կարող է ստանալ կողը ( ցանկացած ծրագրի ) և օգնել պրոեկտին, կամ այլ մարդկանց հարցնել. "Իսկ ինչ կլինի եթե ... .., արդյոք սա անվտանգության թերություն չ'է":

## Ձեր ՕՏ-ն անկայուն է՞

Երբևիցե կորցրել ե՞ք ձեր աշխատանքները Windows-ի հետ կապված պրոբլեմների պատճառով: Միշտ ե՞ք արդյոք անջատում ձեր համակարգիչը ճիշտ, թե ստիպված եք լինում անջատել այն հոսանքի աղբյուրից, քանի որ Windows-ը 'գծվել է' և չի թույլատրում ձեզ անել որևիցե մի գործողություն: Հանդիպե՞լ է արդյոք ձեզ "կապույտ էկրանը", որը տեղեկացնում է ձեզ, որ համակարգիչը անհասպաղ պետք է անջատվի անհայտ պատճառներով:

Windows-ի վերջին տարբերակները դառնում են ավելի կայուն: Այնուամենայնիվ, օգտվողները հաճախ են ստիպված լինում հանդիպել վերը նշված խնդիրների:

Իհարկե, գոյություն չունի իդեալ ՕՏ, և այն մարդիք, ովքեր ասում են, որ իրենց համակարգը երբեք խնդիրներ չի ունեցել՝ լավագույն դոպքում ստում են: Մակայն, գոյություն ունեն ՕՏ-ներ, այնքանով կայուն, որ աշխատում են կայուն նույնիսկ մի քանի տարի անդադար աշխատելուց հետո: Այդպիսի ՕՏ-ներից մեկը Linux-ն է: Linux-ը կարող է առանց վերաբեռնման աշխատել տարիներ: Մի շարք դեպքերում, որոնք կապված են համընդանուր համակարգի թարմացման հետ, այն կարող է պահանջել վերաբեռնում: Բայց եթե դուք տեղակայել եք Linux, իսկ հետո օգտագործում եք այն ցանկացած ծանրաբեռնվածությամբ, թողնելով այն միացված, կարող են անցնել տարիներ առանց ինչ որ պրեբլեմի:

Հասականալի է, որ դուք չեք թողնի ձեր համակարգիչը միացված այդքան երկար ժամանակ, բայց այս օրինակը լավ է ցուցադրում Linux-ի կայունությունը:

## Կարիք չկա վճարել 300\$ նոր ՕՏ-ի համար կամ անօրեն այն պատճենել

Հնարավոր է դուք կասեք. "Ես ՕՏ-ի համար չեմ վճարել": Դուք դրանում համոզվա՞ծ եք: Եթե ձեր համակարգիչը եկել է Windows-ի պատճելով, ապա դուք վճարել եք արդեն դրա համար: Նույնիսկ եթե խանութը ձեզ տեղյակ չի պահել այդ մասին: Windows-ի լիցենզիան ( միջին ) արժի ձեր նոր համակարգի գնի քառորդ մասը: Այսինքն, եթե դուք չեք օգտագործում Windows-ը ոչ լեգալ, ապա դուք դրա համար վճարել եք: Եվ այդ գումարը այդքան էլ փոքր չէ:

Միարժամանակ դուք կարող եք ստանալ Linux անվճար: Ամբողջ աշխարհից մասնագետներ բավականին տանջվել են, որ ստեղծեն անվտանգ, հարմար, հաճելի արտաքին ունեցող համակարգ և այժմ այն բաժանում են անվճար: Իհարկե, որոշ ընկերություններ ստանում են բավականին մեծ գումարներ իրեց ՕՏ-ից օգտվողների համար օգնություն տրամադրելու և այլնի համար: Բայց հիմնական դեպքերում դուք ստիպված չեք լինի վճարել: Բացի այդ, գոյություն ունեն բազմաթիվ քննարկումների բաժիններ տարբեր կայքերում, որտեղ հաղորդակցվում են համակարգից օգտվողներ, փորցեր են արնում, խորհուրդներ են տրալիս և օգնում են միմյանց՝ իհարկե անվճար:

[www.gnu.am](http://www.gnu.am)